սպասաւորութենէ քրիստոնէից, որով Իսմայիլացւոցն ՈԼԶ (= 1187) թուին հայոց. ի վերայ որոց բազում արեանց հեղմունք եղեն լատինացւոց բազմացեղ ազգաց». (տե՛ս նաև ՄՁ. Թ. 297, Թ. 1930, Թ. 1946. Արձագանգ. 1891. Թ. 62. Նոր Դար. 1891. Թ. 65)։ Լամբրոնացին կը վախճանի 1198ին։ Տեսնել իր իր կենսագրութիւնը և երկասիրութիւնները (Ազգպտմ. էջ 1454 և 1536—1544)։

Լամբրոնացիին մայրը՝ Շահանդուխտ ևս 1169ին ուխտաւորութեամբ այցելած է Ս. Երուսաղէմ և ապա վերադարձած է հայրենիք։ Իր մասին տեսնել Լամբրոնացիին Մեկն. Սաղմոսի յիշատակարանը, ընդօրինակութեամբ Սամուել կրօնաւորի (Տաշ. Ցուց. էջ 333 նաև Արծրունեան, էջ 188)։

ՆԵՐՍԷՍ ԵՊՍ. ԳԷՈՐԳԵԱՆ, ԹԷԲԻՐՏԱՂՑԻ.— Մբ. Ծ. 1828ին. աւագանի անունը Կարապետ. Ձռ. 1853ին. ՏՊ. (1854—56) աւագ քարտուղար (1856—63). Նէ Հնդկաց (1866—68). կը ձեռնադրուի եպս. 1876ին. արքեպս. 1902. Առ. Թէքիրտաղի (1877—1888). դարպասպնկալ (1889—96). փոխանորդ (1896—1906). կը վախճանի Երուսաղէմի մէջ 1906ին։ Ի նպաստ Ս. Յակոբի վանքին յիշատակ կը թողու մթերանոց մը Յոպպէի մէջ (Արձագր. Տն. Ժողովի 1889)։ Ներսէս եպս. իր նուիրակութեան առթիւ գրի առած է Հնդկաց կռապաշտական սովորութիւնները և 1874ին հրատարակած է Սիոնի մէջ։ Ներսէս եպս.ի Հնդկաց նուիրակութեան առթիւ խնդիր ծագած է թէ ի՞նչ իրաւասութեամբ Ս. Յակոբի Աթոռը, առանց գիտութեան Զուղայի Ամենափրկչի վանքի առաջնորդին, նուիրակ կը ղրկէ Հնդկաստան, յետ քննութեան հաստատուած է թէ՝ Զուղայի առաջնորդ Խաչատուր եպս. Յարութիւնեան, Վաղարշապատեցի (1838—1842), «վաւերական գրութեամբ առ Երուսաղէմ, տուեալ է արձակութիւն Աթոռոյն, որպէս զի ազատ լցեն հանելոյ նուիրակ ի Հնդկաստան և զարմանք մեծ՝ չունելն այժմ այս եկողի ընդ իւր զայն հրամանագիր»։ (Արշալոյս Արարատեան, 7 Դեկտ. 1868)։

ՆԵՐՍԷՍ ԵՊՍ. ԽԱՐԱԽԱՆԵԱՆ, ՄՇԵՑԻ.— Մբ. Մշոյ Ս. Կարապետի. Ծ. 1847ին, Ձռ. 1874ին. Վանահայր և Առ. Մշոյ (1889—93). կը մեկնի Բաղէշ և ապա Պոլիս (1893—94). քարոզիչ Բերայի 1895ին. ազգ. խնդիրներու առթիւ 1896ին կը տարապրուի